ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԻՁԻԹԵՉ ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/58 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
4	Համակարգային բլոկ (պրոցեսոր)։ Պրոցեսորը պետք է լինի x86-64 ճարտարապետությամբ,i5-12400F կամ i5-14400F։ Օպերատիվ հիշողություն՝ 16 ԳԲ DDR5։ Կուտակիչ՝ 512 ԳԲ ծավալով NVMe M.2 SSD։ Գրաֆիկական քարտ՝ սեղանադիր համակարգչի համար նախատեսված, NVIDIA GeForce RTX 3050, 6 ԳԲ GDDR6 սեփական տեսահիշողությամբ և միաժամանակ երկու 3840×2160@60Hz էկրան միացնելու հնարավորությամբ։ Պետք է ունենա դրա համար անհրաժեշտ երկու ֆիզիկական տեսաելք՝ HDMI 2.0, DisplayPort 1.4։ Մայրական սալիկ՝ պրոցեսորի, օպերատիվ հիշողության, SSD-ի և գրաֆիկական քարտի հետ լիարժեք համատեղելի, Gigabit Ethernet ցանցային միացմամբ և 4 հատ USB 3.0։ Սնուցման բլոկ՝ 650 Վտ անվանական հզորությամբ, 80 PLUS Bronze հավաստագրմամբ, Active PFC տեխնոլոգիայով և գերլարումից, գերհոսանքից, կարճ միացումից ու գերբեռնվածությունից պաշտպանություններով։ Համակարգչի իրանը պետք է ապահովի բաղադրիչների պատշաճ օդափոխությունը և հովացումը։ Հավաքածուում պետք է ներառվեն ստեղնաշար և օպտիկական մկնիկ։ Համակարգիչը կարող է հավաքված լինել մատակարարի կողմից։ Բոլոր հիմնական բաղադրիչները՝ պրոցեսորը, մայրական սալիկը, օպերատիվ հիշողությունը, SSD կուտակիչը, գրաֆիկական քարտը և սնուցման բլոկը, պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային արտադրության, ունենան արտադրողի և մոդելի հստակ նշում ու համապատասխանեն իրենց արտադրողների պաշտոնական տեխնիկական բնութագրերին։ Չի թույլատրվում օգտագործել վերանորոգված, վերականգնված, նախկինում շահագործված, արտադրողի ու մոդելի նույնականացման նշում չունեցող բաղադրիչներ։ Համակարգիչը պետք է մատակարարվի ամբողջությամբ

	հավաքված, կարգաբերված, փորձարկված և շահագործման պատրաստ վիճակում։ Երաշխիքային ապահովում և սպասարկում Մատակարարը պետք է տրամադրի 12 ամիս երաշխիք՝ ընդունման-հանձնման օրվանից։ Երաշխիքային սպասարկման բոլոր ծախսերը կրում է մատակարարը, իսկ վերանորոգման անհնարինության դեպքում սարքը պետք է փոխարինվի նոր և սույն բնութագրի պահանջներին համապատասխան սարքով։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ИЗИТЕЧ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/58 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
4	